

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Նպատակը արդարացնում է միջոցները»:

Մի սկզբունք կայ, որ՝ մուտք գործելով հասարակական որևէ կազմակերպութեան մէջ՝ միշտ միենոյն բացասական հետեանքն է առաջացնում, թէկուզ այդ կազմակերպութիւնը իր վերջնական նպատակն իդէալական համարի: Այդ անբարոյակա-նացնող ու ժանդ սկզբունքն է՝ նպատակն արդարացնում է միջոցները:

Եզուխոնները իրանց ինկվիզիցիայով, բռնակալութիւնը իր բանտերով և կախաղաններով, բիւրօկրատիան՝ հասարակական ինքնավար ձգտումների ճնշումով, դեմագոգիան իր գերիշխանա-կան հակումներով և այլն և այլն՝ այդ բոլորը իրանց չարագործու-թիւնները փաստաբանում են՝ «նպատակը արդարացնում է միջոց-ները» սկզբունքով: Եւ նկատէք որ միշտ էլ այդպէս ասողների մէջ կան թէ իսկապէս հաւատացողներ, թէ կեղծողներ:

«Նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքը իր լոգիկ հետեանքներով այնքան առաձգական է որ չկայ մարդկա-յին չարամիտ հանճարի հնարած միջոց որ չարդարացնուէր այդ սկզբունքով: Հետեանքը այն է լինում որ «իդէալական նպատակը» մնում է դադարկ հնչիւն, իսկ միջոցները դառնում են ամեն տեսակ շահագործութեան, կամայականութիւնների և բռնութիւնների շօշափելի իրողութիւններ, որոնցից տուժում է ամբողջ հասարակութիւնը, ժողովուրդը: Բնականաբար, սկըս-ւում է տրտունջ, բողոք. սակայն իշխելը և շահագործելը այն-քան գրաւիչ է և ձեռնտու այդ կազմակերպութիւնների ան-դամների համար որ հեշտութեամբ բաժանուել գերիշխող դիր-քից նրանք չեն ցանկանում: Եւ ահա «նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքին հաւատարիմ՝ նրանք լարում են իրանց բոլոր հնարագիտութիւնը՝ մի կողմից խեղդելու բողոքի ձայնը, իսկ միւս կողմից մաքուր և իդէալական ցոյց տալու իրանց: Եւ անբարոյական սկզբունքը զարմանալի կերպով վերջ իվերջոյ դալիս է յանգում գործելու նոյն սիստեմին, նոյն եղանակին. լինի Ապրիլ, 1906.

դա Լոյսլայի, Մակկիավելլի, Րոբեսպիերի, թէ Պլեվելի դրած վերջնական նպատակը։ Ի՞նչ է հզրակացութիւնը. այն որ անբարոյական, անարդար միջոցներով երբէք չի կարելի լաւ նըպատակների հասնել. իդէալական նպատակները պահանջում են և մաքուր միջոցներ։ Երբէք ժամանակաւոր աշոգութիւնը անբարոյական միջոցներով չպիտի կուրացնի մարդկանց. դա խաբուսիկ, սնամէջ, ուսցրած աշոգութիւն է, որովհետև ոչ բնական օրէնքներն ենք կարող կեղծել, ոչ հասարակական զարգացման օրէնքները մեր կարճամիտ խորամակութիւններով և մանկավարժներով շեղել... Հասկացողին այս էլ բաւական է, իսկ չհասկացողին՝ թէկուզ զուռնա նաղարա...

Ռուս բիւրօկրատիան էլ այն տեսակ կազմակերպութիւններից մէկն է, որոնց մասին վերև խօսեցինք. «նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքն է նրա բոլոր գործողութիւնների հիմքը։ Եւ կարծում էք թէ նրանք պակաս սրամիտ էին և ճարպիկ «նպատակները» ամենադեղեցիկ, ամենաիդէալական գոյներով նկարագրելու գործում։ Սխալում է՝ք, լսէք, կարդացէք նրանց իդէօլոգներին, վարձկան պաշտպաններին, սինիքոր խնկարկուներին. ամենքան «ժողովրդի բարօրութեան, խաղաղութեան, ապահովութեան և օրէնքի» անունով է կատարւում...

Ցուսիմա—Մուկդէնից յետոյ փառազուրկ, ներքին յեղափոխութիւնը ճնշելու տմարդի միջոցներից խայտառկուած այդ բիւրօկրատիան մեծ յոյս ունէր թէ տգէտ, իրաւագուրկ ժողովուրդը, մասսան, որի անունից նա միշտ խօսել է, արդարացուցիչ բուէ դուրս կը բերի արուեստական կերպով սարքած ընտրողական սխտեմի միջոցով, և այդպիսով գէթ արտաքուստ այդ բիւրօկրատիան կարող կը լինի շարունակել իր հին երգը թէ տգէտ, անպատրաստ ուսուս մուսիկը պահանջում է նրա հայրական հոգաստարութիւնը։ Սակայն հասարակական զարգացման լոգիկան քայքայեց այդ կարճամիտ ազուէսների բոլոր ծրագիրները, և հէնց նոյն մուսիկը դուրս եկաւ հրապարակ և ի լուր աշխարհի յայտնեց թէ՛ նա այլևս չի ուզում բիւրօկրատիայի խնամակալութիւնը։ Ռուս մուսիկը դարերի ընթացքում այնքա՛ն հայրաբար իր վրայ խնամք թափող բիւրօկրատներին թողեց և անցաւ միշտ ըմբոստ, միշտ ընդդիմադիր աղատամիտ խնտելիգենցիայի կողմը. նա ձեռք մեկնեց ձախակողմեաններին։ Եւ «ժողովրդի ազատութեան» կուսակցութիւնը այդպիսով կարողացաւ դուրս բերել ուսու բիւրօկրատիայի համար հասարակական խղճով կայացած մեղադրական խիստ դատաւճիռ։

Մնում էր որ սևացած բիւրօկրատիան հեռանայ ասպա-

ընդհանուր և երկրի ղեկը յանձնի ժողովրդի ներկայացուցիչներին ղեկ աշխատանքներով, որ յայտարարուած էին Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով: Սակայն, ինչպէս յօդուածիս սկզբում ասացինք, իշխելն ու շահագործելը չափազանց քաղցր է. բիւրօկրատիան մտածեց նոր մանեօվրի դիմել. ժողովրդի շահերի խնկական պաշտպաններից իրանց անկախ դարձնելու նպատակով նախ և առաջ տնտեսական անկախ դիրք ստեղծել իրանց կաստայի համար, փող ձեռք բերել, որպէսզի ամին անգամ ստիպուած չլինեն Պետական Դոմայի համաձայնութիւնից կախում ունենալ: Բայց այդ բիւրօկրատիայի վարկը այնքան ընկած էր որ ոչ ոք այլևս փող չէր տալիս. ժողովրդից կեղեքել էին որքան հնարաւոր էր, այլևս նրա վրայ հալ չէր մնացել. պէտք էր դիմել արտասահմանի խողոր վաշխառուներին կամ բանկիրներին: Իսկ վաշխառուն յիմար չէ. նա միշտ ըմբռնուած է պարտք անողի բոլոր թոյլ կողմերը և փող տալիս այնպիսի հաշուով որ կորուստ չունենայ. պարտք ուզողի վարկը կասկածելի է, ուրեմն գլխի անագին տոկոսներ, դիր այնպիսի պայմաններ որ նա անկարող լինի դուրս գալ ճիւղաններից... Իրանց համար շատ ձեռնառու պայմաններով Փրանսիական բանկիրները յանձն առան օգնել ոռոս բիւրօկրատիայի ներկայացուցիչ ֆինանսների նախկին մինիստր Կոկովցեվին և ապրիլի 1-ին արդէն յայտնի դառաւ որ Ռուսաստանը կնքել է 2¹/₄ միլիարդ ֆրանկի փոխառութիւն, ժողովրդի համար ամենանպաստ պայմաններով: Սակայն ինչ փոյթ բիւրօկրատներին. վճարողը իրանք չեն լինելու խոմ, իրանք միայն օգտուողներն են...

Ֆինանսական կողմից իրան այդ կերպ ապահովելով Պետական Դոմայի օպարդիցիայից, ոռոս բիւրօկրատիան ասանց ուշադրութեան չթողեց և դէպի իր բաստիլեան տանող այն ճեղքը, որ քացուած էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստով և ապա կիսատ պռած ձեփուած փետրուարի 20-ի մանիֆեստով: Նա ուզեց Դոմայի տուած օրէնսդրական ազատ նախաձեռութիւնը՝ հիմնական ճանփոփոխելի օրէնքների շարքը անցկացնել անխնոր փոփոխութիւններով, որ արդիւնք էին Վիտտէ-Դուրնովօյի քաղաքագիտական հանձարի: Մի փորձ որ առանց դատապարտութեան չմնաց նոյնիս Վենտրոնի օրգան «Слово»-ի կողմից, որի կարծիքով դրանով կառավարութիւնը խախտած կը լինի՝ ներքին տագնապը խաղաղ ճանապարհով լուծելու վերջին յոյսը: Վէյն մոմենտից, երբ փետրուարի 20-ի մանիֆեստը մշտցնուած է հիմնական օրէնքների շարքը, ոչ մի պաշտմենտ արդէն չի կարող նրանց դիպչել: Հիմնական օրէնքները կարող են փոփոխուել միայն սահմանադիր ժողովով, етго Դոմային

հնարաւորութիւն չի տրուում աշխատանքի դիմելու, մինչև որ սահմանադիր ժողովը չի փոխիլ այն, ինչ որ այսուհետև, էլի նոյն՝ բոլորին տեսիլ կառավարութեան հրամանով, դառնում է հիմնական օրէնք: Ո՞ւր էք վերջապէս, պարոն վարիչներ, մեզ տանումս:

Դրա պատասխանը կը ստանանք երևի մի քանի օրից յետոյ երբ կը բացուի Պետական Դուման...

— Երբ մի ամբողջ պետութեան դրութիւնը այդ տագնապալի վիճակի մէջ է՝ դժուար է երևակայել թէ հնարաւոր է ներառի չնչին մասի, նրա այս կամ այն բաղկացուցիչ ազգի կեանքում որևէ հասարակական գործը տեսնել նորմալ զարգացման վիճակում: Բիւրօկրատիական բեժիմը այնքան այլանդակում է մարդկանց որ ամեն մէկը, երբ հնարաւորութիւն է գտնում իր տենչը իրագործելու՝ ձգտում է դառնալ իշխող, շահագործող, հարստահարող... Անշուշտ դարձեալ չի մոռացւում «ամեն ինչ ժողովրդի համար» բանաձևը: Մեր «հայկական կեանքում» էլ կան բիւրօկրատիաներ, բիւրօկրատներ, սակայն, իհարկէ, աւելի մանր և առանձայատուկ տեսակի...:

Այդ հայկական բիւրօկրատիայի տեսակներից մէկը ամբողջապէս կազմուած է սեւազգեստ վեղարաւորներից: Ինչպէս ամեն մի կազմակերպութիւն որ իրան նպատակ է դրել ամեն ինչ շահագործել հէնց այդ կազմակերպութիւնը ուժեղացնելու նպատակով, այնպէս էլ մեր հոգեւորականութիւնը ձգտել է մեր բուրժուազիայի հարստութիւնն էլ, ժողովրդի հաւատքն էլ, դպրոցներն էլ, բոլորը, բոլորը շահագործել կղերի օգտի տեսակէտից: Շնչապատկը արդարացնում է միջոցները!

Կղերի հաւ այդ ոտնձգութիւնների դէմ քսան տարի մաքառել է փոքրաթիւ ընդդիմադիր կուսակցութիւնը մեզանում, պահանջելով որ կղերը, կաթողիկոսից սկսած մինչև վերջին տիրացուն, լինեն ժողովրդի սպասաւորներ և ոչ տէրեր, հայ եկեղեցին իր դպրոցներով և կալուածներով ծառայեն միայն իր՝ ժողովրդի շահերին: Սակայն իշխելու և շահագործելու տենչը թոյլ չէր տալիս որ տիրող օրէնքների վրայ իր դիրքը հիմնած հայ կղերը որևէ զիջում անի. նա հալածում էր, որքան միջոց և հնարաւորութիւն ունէր, իր գերիշխանութեան դէմ վաքառողներին: Շնչապատկը արդարացնում է միջոցները!

Այժմ ընդհանուր ազատագրական հոսանքները ստիպում են և մեր կղերին որոշ զիջումներ անել: Բայց նա դեռ հաճոյանում է փողի և բռնի ոյժի ներկայացուցիչներին մեղաւորել... Շնչապատկը արդարացնում է միջոցները!

Մեր կղերական բիւրօկրատիան կարծում է թէ կարելի է

ներկայ յեղափոխութիւնից դուրս պրծնել, անփոփոխ պահպանելով իր «հիմնական օրէնքները»։ Կաթողիկոսի միահեծան կամքը, նշանակովի առաջնորդները և Արակչէնքի ժամանակներից հիմնուած սինոդը իր արխայիկ կազմով ու ֆունկցիաներով։ Եւ մեզանում կարծես հաշտուել են այն մտքի հետ որ համակարգի է ամենապետկրատիական պահանջներ դնել, համաժամանակ անփոփոխ թողնել թէօկրատիական բիւրօկրատիայի հիմքերը։ Թէ ո՞ր աստիճանի ոգևորուած են այդ իլլիւզիայով՝ ցոյց է տալիս Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների «պայքարը»...։ Նա որ գործել է մեր ազգային-հոգևոր ասպարիզում չի կարող չիմանալ թէ ինչ խախուտ հողի վրայ է վաստակուած իր ամենամաքուր ջանքերն ու եռանդը մի գործիչ, որ ձգտում է կառուցանել այնպիսի շէնք, որ կարող են քանդել. մի նպակագրութիւն է, կաթողիկոսին գրած մի անանուն նամակ, վերհարանում փսփոսացողների մի խմբակ...

Պէտք է «ճշմարտապէս և ոչ կարծեօք» հայ եկեղեցու «հիմնական օրէնքները» դեմոկրատիական դառնան, պէտք է de facto վերջ դնուի կղերի գերիշխանութեան, որպէսզի իսկական դեմոկրատներ (դեմագոգներ, այդ ձեռնտու չէ...) ջանքերը Սիդիֆեան աշխատանքի հետեանքներ չունենան։ 12 տարի առաջ մենք շնչուել ենք այն, ինչ կրկնում ենք և այժմ. պէտք է ժողովրդի ներկայացուցչութեամբ սահմանափակուի կաթողիկոսի իրաւունքը վարչական գործերում և նա մնայ լոկ իբրեւ պատուաւոր ներկայացուցիչ հայ եկեղեցու, կրօնապետ։ Թող մեր կղերականները բաւականանան կաթողիկոսի համար այն դերով, որով զոհ են ամենահզօր սահմանադիր սլետութիւնների գլուխները։ Ներկայացուցչութիւն։ Իսկ մեր ազգային-եկեղեցական գործերի կառավարութիւնը պէտք է կենտրոնացած լինի քառանդամ ֆորմով ընտրուած ժողովրդական ներկայացուցչութեան ձեռքում։ Ժամանակ է վերջ դնել վերհարանի և նշանակովի առաջնորդների անկոնտրոլ, բմահաճ կամայականութիւններին։ Բաւական է եթէ դրանց թողնուին զուտ կրօնական-դաւանաբանական հարցերը, քանի որ հայ ժողովուրդը դեռ «առանց ժամի» չի կարող երեակայել իր կեանքը։ Եւ Ռուսաստանում սահմանադրական մի բեժիմի ներքոյ, երբ զէթ «օտար եկեղեցիները» բաժանուած են պետութիւններից և ծուխից է կախուած դրանց ներքին կարգ ու կանոնը, երբ ազգերի ինքորոշումը իբրեւ սկզբունք է ճանաչուած—անիրագործելի չէ սահմանադրական սկզբունքով վերակազմել «այոց ժողովրդական եկեղեցին»։ Կաթողիկոսի, սինոդի և առաջնորդների բացարձակ կամքի, կղերական-բիւրօկրատիական քմա-

հաճոյքի տեղ պէտք է բռնի սահմանադրական, ընտրովի «հենտ-րոնական խորհրդի» գործունէութիւնը: Մինչև չվճռուի «հիմնական օրէնքների» այդ արմատական փոփոխութիւնը՝ շուր ծեծել է նշանակուած զանազան վերանորոգութիւնների մասին ծրագրները և ժողովներ գումարելը...

Պատմական-հասարակական զանազան հանգամանքների շնորհիւ մեր եկեղեցու հետ կապուած զանազան հիմնարկութիւնները, որոնք շօշափում են մեր ժողովրդի մտաւոր-բարոյական (գալորցները), նոյնիսկ տնտեսական (կալուածներ) շահերը՝ պէտք է ապահովուեն կղերի գերիշխանական ձգտումներից, նախ և առաջ կատարեալ իրական դեմոկրատիզացիայի ենթարկելով մեր եկեղեցական-վարչական գործը, սկսած էջմիածնից: Ահա քառանգամ ընտրութեամբ կատարած «ազգային ժողովի» առաջին պարտականութիւնը. փոխէք նախ և առաջ «հիմնական օրէնքը» — վերջ դնելով կղերական աքսոլիւտիզմին, ապա մտածէք միւս ընթերցանների մասին...

Լ. Ս.

22 Ապր.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական սինդիկատների action directe-ը: — Ֆր. բեկցիօներն ին պրովոկացիան. — Բագէյի պրոֆեսիօնալ կադր. ներկ. համագումարի որոշումը: — Պ. Կիւրի. — Անգլիան Եփրատում: — Հայերը Թիւրքիայում:

Աշխատաւոր մասսաների տրամադրութիւնը ամենուրեք բարձարցել է ռուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ: Այդ պայմանում բնական է որ աշխատանքի համաշխարհային տօնի օրին (մայիսի 1-ը ն. տ., ապր. 18 հ. տ.) այս տարի սպասուած էին խոշոր յուզումներ: Ամենից շատ երկիւղ էին կրում ֆրանսիական բանուորականութիւնից, որովհետև Կուրբիէրի կատաստրոֆից յետոյ մի շարք գործադուլներ էին սկսուել